

## ԿԱՐՈԼՈՍ ԺԵ · ԹԱԳԱԽՈՐ ՇՈՒԵՑԱՑ

Յետ հնդետասան ամաց արժանաւոր թագաւորութեան, անցեալ տարւոյն սեպտեմբերի 18են կը մեռնի յանակնկալս վաղահաս մահուամբ՝ կարոլոս Շուետաց թագաւորն, Տանիմարքայէն դառնալու ժամանակ, ուր այցելութեան գնացեր էր իր միակ դստերը, ամուսնացելոյ Դանեաց արքայութեան թագաժառանդին հետ։

Կարոլոս Շուետաց առաջին կարգի թագաւորաց մէկն պիտի համարուի, և անունը պիտի մշտնջենաւորի անմոռաց նոյն ժողովրդեան տարեգրութեան ու պատմութեան մէջ, 'ի յիշատակ իր մեծածիգն եռանդեանն առ 'ի բառնալ զնշխարս աւատական իշխանութեան՝ որ մնացեր էր տակաւին Շուետաց քաղաքական կարգաց մէջ։

Կարոլոսիր թագաւորութեան ատեն այս արդիւնքն իսկ ունեցաւ, որ միշտ հետամուտ եղաւ'ի մի թագաւորութիւն շաղկապել բոլոր սկանտինաւեան ազգերը, և զայս ոչ բռնութեամբ կամ պատերազմաւ, այլ իոաղաղութեամբ ու համոզմամբ, պատրաստելով նախ երեք ազգերն առ այս, վՇուետս, զնորվեկիացիս և զՃանիմարքացիս, դաստիարակութեամբ ու սկզբանց համաձեռնութեամբ, և մանաւանդ 'ի մի խառնելով երկուց տէրութեանց Շուետի ու Տանիմարքայի շահերն՝ արքունական ընտանեաց ազգախառնութեամբ։ Բայց իր այս ջանիցը պնդապէս ընդդէմ յարեան գլխաւորապէս Նորվեկիոյ կուսակալութիւնք, որոնք իբրև նուիրական ինչ այնպէս կը յարգէին իրենց վաղեմի Սահմանադրութիւնը։ և չէին ուզեր դպչիլ անոր, թող թէ եղծանել զայն։ — Կարոլոս ուրիշ առաջարկութիւն մ'ալ ըրաւ խորհրդարանին, այն է ջնջումն օրինաց մահուան, բայց չյաջողեցաւ ու մերժուեցաւ։

Թէպէտ ձախորդ գնացին կարոլոսի մտաց խորհուրդներն ու ջանքն, բայց այնու հանդերձ չեմք երկրայիր կոչել

ղնա վերանորոգիչ ազգին, այնու մանաւանդ որ իր հաստատամտութեամբն յաջողեցաւ վերջապէս յետ բազում ջանից, եղանակաւորել քաղաքական վաղեմի կարգադրութիւնքը, փոխանակելով 'ի տեղի վաղեմի տէրութեանց ազգային ներկայացուցումն, այսինքն՝ ճշմարիտ Սահմանադրութիւն ներկայացուցչական։ Եւ այս եղաւ յամին 1866, որ կարոլոսի ԺԵ՞ զլխաւոր գործոց մէկն է, և իր երկրին պատմութեան, ինչպէս ժողովրդեան մտացը մէջ, իբրև անմոռաց գործ մը պիտի յիշատակուի։

Այս վերանորոգութիւններն՝ որոց հետամուտ էր կարոլոս՝ կը պաշտպապանէր և օրագրաց մէջ, և առաւելապէս բանակին վերանորոգութեան խընդիրը. բայց և ասիկա իսկ ընդունելի չեղաւ խորհրդարանին. և այսպէս առանց ամբողջապէս 'ի զլուխ տանելու իր ազգօգուտ փափաքներն, յանկարծահաս մահուամբ վախճանեցաւ, թողլով յաջորդ իր եղբայրն, որ բարձրացաւ յաթոռ Ոսկար Բ. անուամբ, ծնեալ 'ի Սղոփոլմ յամին 1829 յունուար 21, և էր երրորդ որդի Ոսկարի Ա. թագաւորին Շուետաց, որ ընտիր դաստիարակութիւն մը տուաւ իր որդւոցը, ջանալով տպաւորել անոնց մատաղ սրտին մէջ սէր գիտութեան, դպրութեան և արուեստից։

## ԱՆԴՂԻԱՑԻՔ ՅԱՓՐԻԿԵ

ՊԱՏԵՐԱԶՄ ՈՍԿԻՈՑ-ԱՓԱՆՑ · · ԱՇԱՆԴՔ

Եւրոպական տէրութեանց քաղաքականութեան ապագայ վիճակը քանի մը տարիէ 'ի վեր սպառնական կերպարան կ'առնու։ Եթէ Արևմտեան կոչեցեալ ազգաց երկրին ու աշխարհին անձուկ սահմանէն դուրս ելլալու ըլլամք, կը գտնեմք շրջապատեալ զայն շատ աւելի յընդարձակածաւալ բարբարոս աշխարհաց, որ կ'երևի թէ ուրիշ կերպով պիտի չի կարենան հաս-

**ՆԻԼ ԱՐԵԱՄՏԵԱՅՋ ԸՆԿԵՐՈՎԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱ-ՔԱԿԱՆԱԳԵԵՎԱԼ ՎԻՃԱԿԻՆ,** բայց եթէ անցնելով զինուորական արուեստին խոշոր հրահանգներէն, որուն պարտական է նոյն իսկ և Արեամուտք իր այժմեան զարդացումը ու բարդաւաճանքը : Այն երկչոտ տղաքն, (բարբարոս ազինք), որ կը դողային երբեմն արեամտեան ժողովրդոց հարց առջին, այսօր յարբունս հասեալ, կ'ուզեն բունութեամբ զինաթափ ընել անոնց որդիքը, և գոզցես հաւասարիլ իրենց ուսուցչացը զօրութեամբ զինուց : Արեալեան հին ազգերն ոչ թէ ուրիշ բանի համար կը զարթնուն 'ի թմբրութենէ, բայց եթէ յարուցանել Արեամտեայց դէմ անհաշտ ու անվերջանալի պատերազմ : որոց պիտի չի կարենան դէմ դնել ոչ զինուք և ոչ իսկ բազմութեամբ : Այս ազգերն որոց արեամտեան վաճառականք հրացան ու թնդանօթ կը տանին միշտ, յիսուն կամ վաթսուն տարիէ 'ի վեր սկսան դաշնակցիլ իրարու մէջ . կամելով իմն յափշտակել եւրոպացւոց ձեռքէն աշխարհիս հրամանատարութիւնը : Եւ ահա զիտեմք որ երկու տարիէ 'ի վեր Հոլանտացիք մեծածախ պատերազմ մը բացած են 'ի Սունտրեան կղզիս ընդդէմ Աշխաց . որուն յաջողութեան թաթն ո՞ր կողմն հակին դեռ ևս անստոյգ է : Նոյնպէս և Անգղիա գրեթէ երկու տարի է որ կը պատերազմի ընդդէմ սեամորթ Աշխաղից, և չի կրցաւ տակաւին ընկճել զնոսա իր ամենայն զօրութեամբն :

**Աշանդք՝ Ափրիկոյ ծովափանց ուրիշ ժողովրդոց նման պատերազմասէրք են,** և կը տիրեն կուինէայի ծովագողին ծովեղերեայ բարձանց, զորս կոչեն Ռուկոյ – Ափունք . և կը տարածուի ազգեցութիւննին 'ի Մեծ Պարսամէ մինչև 'ի Տահոմէյ . ուստի յետ անգղիականին անտարակոյս պիտի սկսին սպառնալ և գաղղիական գաղթականութեանց երկիրներուն :

**Եւրոպիոյ տէրութեանց մէջ առաջին անգամ կուինէայի ծովագողին և մասնաւորապէս Ռուկոյ – Ափանց եղե-**

րաց վրայ կալուած ունեցողն ու վաճառականութեան տուն հաստատողն Բորդոգալցիք եղան, բայց ապա այս կալուածոց մեծագոյն մասը Հոլանտացւոց շնորհեցին եօթն և տասներորդ դարուն երկրորդ կիսուն : Այս ատենները նոյն ափանց ուրիշ կողմանց վրայ սկըսան հաստատուիլ և Անգղիացիք, գրլխաւոր զիտմունքնին այն ըլլալով որ մանրեալ ոսկւոյ վաճառականութիւն ընեն . բայց իրենց հաստատուած օրէն մինչև հիմա նախանձն ու տրտունջն երբեք չի դադրեցան : Ներկայ դարուս սկիզբները Անգղիացիք իրենց անցուցին Հոլանտացւոց կալուածները . և հուսկ ապա վերջին ատեններս Հոլանտացիք կամ 'ի ձանձրութենէ և կամ յանկարողութենէ՝ շնորհեցին յակամայս իրենց նախանձորդին բոլոր ունեցած կալուածնին : Այս որոշիչ ու պաշտօնական շնորհումը տեղի ունեցաւ 1871 ամին փետրուարի մէջ . իսկ Էլմինա, Աքսիմ և Տիքաքուվ ամրոցներն յաջորդ տարւոյն ապրիլ ամսոյն մէջ ստացան Անգղիացիք : Բայց այս բանս մեծ տժգոհութեան պատճառ տուաւ տեղացի ժողովրդոց, որուն հետեանքներն դեռ մինչև ցայսօր կը տևեն, և սկզբնառիթք են այժմեան պատերազմին :

**Բայց յառաջ քան պատահած դիպուածոց պատմութիւնն ընելու, կարեւոր կը համարիմք տեղեկացընել ընթերցողաց այս պատերազմին տեսսարան եղող աշխարհին բնագիտական ու քաղաքական աշխարհագրութիւնն , ինչպէս նաև բնակչաց բարքն ու սովորոյթն , և վաճառականական կեանքն :**

**Հոլանտացւոց Ռուկոյ – Ափանց կալուածներն կը բովանդակէին եօթն վիճակք, և էին Ապոլոնիա, Աքսիմ, Տիքաքուվ, Պաւդրի, Աէքունտի, Շամա և Էլմինա :**

**Ապոլոնիոյ վիճակն գլխաւոր կենդրոն մ"էր վաճառականութեան մանրեալ ոսկւոյ և իւղոյ արմաւենւոյ . բայց այս վերջի ատեններս գրեթէ բոլորովին խափանեցաւ 'ի պատճառս տե-**

ղացի սևամորթ ժողովրդոց մէջ եղած գժտութեան ու պատերազմաց :

Աքսիմի վիճակն Ոսկւոյ – Ափանց վիճակաց մէջ ամենէն բարեբերն ու արդաւանդն է . անանկ որ արևադարձային գրեթէ ամեն ազգ տունկերն կ'աճին հոս , որուն գլխաւոր պատճառ կը համարուի այն կենդանարար ջրոց բազմաթիւ ընթացքներն՝ որ կ'ոռոգանեն զերկիրը : Բայց ասոր հակառակ երկրին հիւսիսային արևելակողմը կարգէ դուրս խոնաւ է , և ասոր պատճառն ալ ջրոց ազատ ընթացք չունենալն և շատ տեղ լճացեալ մնալն է : Այս վիճակին գլխաւոր քաղաքն՝ համանուն վիճակին՝ Աքսիմ կոչուի , որ արևելեան կողմը կ'իյնայ՝ կառուցեալ 'ի վերայ ծովափանց և պաշտպանեալ Ս . Անտոն անուն ամրոցէ , որ բարձրանայ 'ի վերայ ժայռի միոյ 'ի միջավայր քաղաքին : Բնակիչքն ըստ աշխարհամարի 1867 ամին , 750 հոգի էին միայն : Հանէին 'ի վաճառ մանրեալ ոսկի և իւղ արմաւենւոյ , բայց անվերջենալի աղետաբեր պատերազմունք զգալի կերպով խափանեցին այս վաճառականութիւնը :

Տիքարուվի վիճակն իր անունը Տիքաքուվ ամրոցէն առած է , փոքրիկ վտակի մը ափունքը շինուած . այս վտակը շատ մը կոկորդիլուներ կը սնուցանէ , առարկայ մեծարանաց սևամորթից սնոտիապաշտ կրօնից :

Պաւդրի վիճակն նոյն ծովափանց վիճակաց մէջ ամենէն բազմամարդն է : Գլխաւոր քաղաքն է Պաւդրի , այսպէս կոչեցեալ համանուն գետէ մը . որ գեղեցիկ դիրք ու տեսարան ունի և ամրոցով պաշտպանեալ է : Կան այս վիճակին իշխանութեան տակ շատ մը գեղեր :

Մէքունափի համանուն վիճակին գըլխաւոր քաղաքն , կընայ իրաւցնէ քաղաք կոչուիլիր 2,500 բնակչովն . նստեալ է սա 'ի վերայ սեպացեալ բլրոյ միոյ ամփիթէատրոնի ձևով , և պաշտպանեալ Օրանժ անուն ամրոցէ : Քաղաքն երկութաղ կը բաժնուի , մին Հոլանտացւոց և միւսն Անգլիացւոց . շրջակայ կողմանքն շատ արգաւանդ են :

Շամա՝ գլխաւոր քաղաք Շամա վիճակին , Հոլանտացւոց հին կալուածոց մէջ ամենէն գլխաւորն էր . բայց հիմա երկրին մեծագոյն մասը ջուրերն ողողած ըլլալով ճախճախուտ է : Երկիրը թէպէտ շատ բարեբեր , բայց վատառողջ է ընդհանրապէս : Շամա քաղաքն զրեթէ 5,000 բնակիչ ունի , և պաշտպանեալ է Ս . Սեբաստիանոս անուն ամրոցէ՝ կառուցեալ 'ի բորդոգալաց :

Էլմինա՝ Ոսկւոյ–Ափանց գլխաւորագոյն քաղաքն է , և ըստ 1867 ամին աշխարհահամարին՝ 15,000 բնակիչ ունի : Զգալի կերպով աճեցաւ իր բնակչաց թիւն քան զայլ մօտակայ քաղաքս , վասն զի զօրաւորագոյն հանդիսացաւ քան զնոսա . մինչդեռ նոքա չի կարենալով վանել զօրութեամբ տեղացի վայրենի ժողովրդոց յարձակմունքները՝ կը ստիպուէին գաղթիլ ուրիշ կողմեր : Ունի զօրաւոր ամրոց մը . և իր Ս . Գէորգ բերդն ու Ս . Յակոբ ամրոցն , Անգղիացւոց միակ ապաստանարանն է հիմա ընդդէմ յարձակման Աշանդաց : Քաղաքը բազմաթիւ գեղերով շրջապատեալ է , զորս աւերեցին մօտերս տեղացի սևամորթք : Էլմինայի արևելակողմը քիչ մ'ալ յառաջելով կը վերջանան Հոլանտացւոց կալուածներն . իսկ Անգղիացւոց գլխաւոր կայանն է Գէրգոստ (Cap - Coast) , որ բարեբախտաբար ամրացած է զօրականօք և պաշարգք , ապա թէ ոչ Անգղիա հաւանաբար կը կորսընցընէր բոլոր իր ունեցած նոր կալուածներն :

Կը տիրեն այս կողմերս երեք գլխաւոր մեծամեծ ցեղք սևամորթից . Ահանդք , ֆանդք և Աշանդք : Այս վերջնոյս գլխաւոր քաղաքն է Գումասսի , համբաւեալ ու զօրաւոր , և ունի իբրև 50,000 բնակիչ :

Ահանդք երբեմն ընդարձակ տէրութիւն մ'ունէին , որ կը տարածուէր Ոսկւոյ–Ափանց վրայ մինչև ցծովեղը , որուն գլխաւոր քաղաքն էր Պոստուա : Բայց Հոլանտացիք երբ քանդեցին այս քաղաքս , Ահանդք երկրին ներքսակողմը առանձնանալով , սկսան արմաւե-

նւոյ իւղոյ և մանրեալ ոսկւոյ շահընկաւ լութեան զբաղիլ։ Ոսկւոյ մանրուքը խառնուած կ'ըլլայ աւազոյ հետ, զոր կը բերեն հետերնին կուինէայի լեռներէն ինջնող գետերն։ Ոսկւոյ մանրուքը կ'ըլլայ գետնոյ երեսին վրայ, և տեղացիք ուրիշ կերպ չի գիտնալնուն՝ լուացմամբ կը ժողովեն, որով գրեթէ կէսը կը կորուսանեն. և լուացումը կանանց գործէ։ Այս վայրագ ժողովուրդներն կը պաշտպանեն իրենց ոսկեզօծեալ երկիրը յետին կատաղութեամբ. և միայն պատերազմողաց թոյլ տուեալ է զարդարել իրենք զիրենք կանանց աշխատանաց արդեամբք։ Շատ անգամ ժողովրդեան զլխաւորներն այնքան ոսկեայ մանեակներով, ու ապարանջաններով ծածկուած կ'ըլլան, որ գրեթէ կ'ընկճուին բեռան ծանրութեան տակ, և քալելու կամ շարժելու համար այլոց օգնականութեան կը կարօտին։

Ֆանդք՝ երբեմն կարի ահարկուք, այնպիսի կերպով պարտեցան յԱշանդաց՝ որ միացան անոնց հետ հասարակաց դատը պաշտպանելու ընդդէմ Եւրոպացւոց։ Թէպէտ և ինկած է, բայց տակաւին պատերազմական է այս ժողովուրդը. աղտեղի է, ծոյլ և հակամէտ յանհոգութիւն. և թերես այս աղտեղութեան հետեւանք տիրած է մէջներնին բորոտութեան ախտը։

Աշանդք գրաւած էին երբեմն արեւելեան գաւառներն. բայց ասկէ մէկ ու կէս դար առաջ հալածուելով անկէ զօրաւորագոյն ժողովը մը, եկան հաստատուեցան գումասսի մօտերն և կանդնեցին անդ զօրաւոր թագաւորութիւն մը։ Արք՝ պատերազմի միայն կը պարապին, ուրիշ ամեն գործերն կանանց ու գերեաց թողլով։ Հարուստներն միայն սովորութիւն ունին զգեստ հագնելու։ Ժողովրդեան զլխաւորի մը զգեստն կը բաղկանայ արծուի փետուրէ, որ կը բարձրանայ եղջերուի ոսկեզօծեալ և դալարածե եղջիւրէ ձեւացուցած տեսակ մը սաղաւարտի վրայ, զոր կը հաստատեն կղակներնուն վրայ խեցիներով ծածկուած փոկով մը։ Կը կրեն

վրանին աղեղ, թունաւորեալ նետերով լեցուն կապարճ, և դալարածն փողոսկրէ գաւազան մը։ Կը կախեն կուրծքերնէն կաշիէ շատ մը քսակների, կը ճօճեն ձեռքերնուն մէջ ձիու ագի, և մինչև սրունից մէջ տեղուանքը կարմիր կաշիէ կօշիկներ կը կրեն։ Մեծ ազնուականի մը որոշիչ նշանն է հովանոցն, որ պարզ ժողովրդեան զլխաւորէ մը լաւ կը զգեստաւորի, ձիու վրայ կը հեծնայ և ունի իբրև սանձակալ մէկ կամ երկու մարդիկ։ Հասարակ զինուորքն գրեթէ մերկամարմին են և կը կրեն վրանին շատ մը կտրոցներ. և թէ որ հրացան մ'ունենալու չափ բաւական հարստութիւն չունեցան, գոհ կ'ըլլան աղեղով մը ու նիզակով։

Աշանդք բացարձակ անաստուածչն։ Մարդկային հոգւոյ վրայ շատ եղական գաղափարներ ունին. կ'ըսեն թէ հոգին յէութեան է յառաջ քան զմարմին, և թէ կրնայ փոխանցիլ 'ի մի մարմնէ 'ի միւսն։ Կը համարին զայն դատեալ 'ի մարմնոյ մարդոյ, որուն մարթէ կ'ըսեն տեղեկութիւններ աւանդել, և թէ կրնայ ընդունիլ նուէր ու ընծայ։ Երկուութիւն մը կը դաւանին արու և էգ. զմին սկիզբ չարի և միւսն բարւոյ։ Աշանդք ինչպէս նաև Տահոմէյը անթիւ բազմութիւն մարդոյ 'ի զոհ կը հանեն։ Սովորական զոհն ամեն երեք շաբաթ մէկմը կը նորոգուի. ուսկից զատ ունին ուրիշ տարեկան զոհ մ'ալ որ կը կատարուի սեպտեմբեր ամսոյն մէջ. և զոհագործութեան կատարիչն է ժողովուրդն։ Յետ լաւ մի արբենալոյ, տան զանձինս 'ի շուայտութիւնս անբացարելի անդթութեամբք, կը զոհեն մի և նոյն ժամանակ և ընտանի կենդանիներ, որոց արիւնը հաճոյը մը կը զգան խառնել մարդկային արեան հետ և լեցընել մեծատարած փոսի մը մէջ։ Երկիրը շատ մը անտառներով ծածկուած է։ Շաքար-եղեգն, ծխախոտն, եղիպատացորեանն ու բրինձըն իբրև զվայրենի տունկս կ'աճին հոս։ Կ'երեսին շատ անգամ անտառաց ու անապատից մէջ առիւծ, վագր, վայ.

ըենի կատու, շնագայլ, փիղ, ռնզեղ-  
ջիւր, ընձուղտ, այծեամն, յամոյր. կան  
դարձեալ զանազան տեսակ կապիկներ  
ու ամեն ազգ թուուններ : Կը տեսնուի  
գետոց մէջ բազմութեամբ ձիագետի ու  
կոկորդիլոս. խոնաւ տեղուանքն լի են օ-  
ձերով, կարիճներով, արջնագորտերով  
և ահագին մեծութեամբ սովորական  
գորտերով :

Այս ամեն բաներն գիտնալէն ետքը,  
դիւրին է 'ի միտ առնուլ այն արշաւա-  
նաց դժուարութիւնն՝ որուն վերջերս  
ձեռք զարկին Եւրոպացիք 'ի ներքսա-  
գոյն կողմն երկրին: Վերոյիշեալ նիւ-  
թական դժուարութիւններէն զատ՝ օղն  
իսկ անտանելի է և բազումուրեք վատ-  
առողջ: Կը պատահի շատ անգամ որ  
օտարականք կը տասանորդին յերեսաց  
ահաւոր հիւանդութեանց այնպիսի տե-  
ղուանք, ուր բնակըն՝ զօրաւոր առողջու-  
թիւնը կը վայելեն, որով այժմէն կը ը-  
նավք գուշակել որ Անգղիացիք թէո-  
դորոս թագաւորին ու Եթովպացւոց  
դէմ տուած պատերազմին յաջողու-  
թիւնն դժուարին է որ կարենան ունե-  
նալներկայապէս Աշանդաց դէմ տուած  
պատերազմին մէջ: Այս առաւելու-  
թիւնն իսկ ունին Աշանդք, որ հայրենա-  
սիրութեան հրով սաստիկ վառուած  
են, մինչդեռ Եթովպացիք յերկար ժա-  
մանակաց անտի տաղտկացած ըլլալով  
թէոդորոսի լուծէն՝ շարունակ յապը-  
տամբութիւն մտաբերէին :

Կը մնայ մեզ հիմա համառօտել հոս  
այն դէպքերն որ պատճառ եղան Անգ-  
ղիոյ այնքան մեծամեծ պատրաստու-  
թեանց առ 'ի պատերազմ, որուն ձեռք  
զարկած է հիմա մեծաւ գործունէու-  
թեամբ: Հոլանտական կալուածոց  
շնորհման դաշնաղրութիւնն ոչ թէ ա-  
ռանց բռնութեան տեղի ունեցաւ, և  
կարծես կը վճարէ այսօր Անգղիա այն  
մէկ երկրորդական շահուն զինն, զոր  
կարծեց դիւրութեամբ 'ի ձեռս բերել  
յանյաջող պատահարաց Գաղղիոյ 1870  
և 1871 ամաց:

Յամին 1872 ապրիլի 4-ին անգղիացի  
նոր կառավարիչն երևելով առաջին ան-

գամ յիշմինա, հոլանտացի սպայից և  
երկրին զլխաւորաց ժողովոյն մէջ ծա-  
նոյց մէկէն, թէ ինքն ամեննեին կամք  
չունի գաղթականութեան կառավա-  
րութեան վրայ փոփոխութիւն մ'ընել  
և կամ նոր բեռ մ'աւելցնել վրանին:  
Կը խոստանար հասարակաց պաշտօնից  
մէջ տեղացիներն ալ գործածել, բաւա-  
կան է որ չափաւոր դաստիարակու-  
թիւն մ'ընդունած ըլլան: Այս ծանու-  
ցումը մեծաւ հաճութեամբ ընդունուե-  
ցաւ, և քանի մ'օրէն կառավարիչն 'ի  
դլուխ անգղիական զօրաց կը մտնայ  
պաշտօնապէս յիշմինա, և հոլանտացի  
կառավարիչն ընդ առաջ կ'երթայ ի-  
րեն, և կը յանձնէ Ա. Գէորգ բերդը 'ի  
շաշիւն և 'ի թնդիւն հարիւր և մի գընտ-  
ընկեցաց թնդանօթից յանգղիական  
նաւուց, որուն կը պատասխանեն և 'ի  
քաղաքէն: Հոլանտացի կառավարիչն  
բերդը յանձնելէն ետքը կ'ելլայ 'ի նաւ  
և կը դառնայ յԵւրոպա:

Նոյն ապրիլ ամսոյն մէջ Հոլանտա-  
ցւոց միւս բերդերն ու ամրոցներն ալ  
Անգղիացւոց ձեռքը կ'անցնին: Բայց  
դիւրին էր գուշակել որ այս բռնադա-  
տեալ շնորհումը՝ զոր ըրաւ Հոլանտայի  
տէրութիւնն առանց տժգոհութեան,  
պիտի չկարենար ընդունուիլ նովին  
համակամութեամբ և 'ի տեղացւոց:  
Անգղիացւոց իշխանութեան հասնիլն  
ծանր խոռվութեանց պատճառ տուաւ:  
Նոր կառավարիչն համարեցաւ թէ պի-  
տի կարենայ խաղաղել յուղեալ ոգիքը  
'ի ձեռն տնտեսական բարւոքման: Ա-  
սով թէպէտ ցածոյց զնոսա առ վայր  
մի, բայց որովհետև Անգղիացիք ըստ  
իրենց սովորութեանը՝ նոյն կողմանց  
տէր եղած օրէն սկսեալ ուղեր էին տա-  
րածել Աշանդաց մէջ աւետարանական  
վարդապետութիւն, պատրաստք կամ  
դարձուցանել զնոսա 'ի կրօնս իւրեանց  
և կամ կորուսանել, անոր համար տե-  
ղացի ժողովուրդք անյողդողք իրենց հա-  
ւատոց վրայ, գրգռեցան սաստկապէս  
ընդէմ այս ապօրինաւոր ու անի-  
րաւ բարոյական բռնութեան, և Ա-  
շանդք այս հասարակաց ընդհանուր

տժգոհութենէն օգտուելով, կալան ու բանտեցին անգղիական քարողիչները։ Այն ատեն անգղիացի կառավարչին առաջին գործն այն եղաւ որ դրկէ իրենց թագաւորին տարբեր ազգութեան իրաւանց ծանուցագիր մը, հրամայելով ազատ թողուլ քարողիչները։ Թագաւորը խուսափական պատասխան մը տուաւ, և պահանջեց՝ ի փրկանս 6,480 անգղիական ստեռլին, այլ ապա գոհ եղաւ 1000 ստեռլինով։ Բայց այս շնորհումը ընելուն պատճառն էր, որպէս զի ժամանակ շահի ու պատրաստէ արշաւանաց զօրաւոր բանակ մը։ 1872 ամին գեկտեմբեր ամսոյն մէջ, Աշանդք մեծ ամբոխիւ արշաւեցին Էլմինայի վիճակին վրայ, և ասոր պաշտպանութեան ներքոյ անկեալ դեղերն ու աւաններն աւարեցին ու քանդեցին։ Հոն տեղի ժողովուրդք չկարենալով ընդդիմանալ ընդ երկար և կամ միանալով անոնց հետ, առաջիկայ տարւոյս մարտ ամսոյն մէջ տարածեցաւ արշաւանաց հեղեղն մինչև՝ ի շրջավայրս Էլմինա քաղաքի։ Մի՛ և նոյն ժամանակ խորվութիւն ծագեցաւ և՝ ի Սէքունտի և՝ ի Պաւդրի, բայց պատրաստական զօրութիւն մը նոյնժամայն խաղաղեց խորվութիւնը։

Էլմինայի ապստամբներն աւելի զօրաւոր և ուժով ըլլալով,՝ ի սկիզբն յունիս ամսոյ զօրաց դլխաւորքն վստահացեալ իրենց ուժոյն վրայ՝ մերժեցին զհնազանդութիւն։ Այն ատեն կառավարիչն անյապաղ զօրաց զանազան դունդեր բերել տուաւ՝ ի գէր գոսդէ, հրատարակեց պատերազմական օրէնք, որով դատաստանքն արագ ու խստիւ կատարին՝ ինչպէս պատերազմի ատեն, և թնդանօթներն սկսան որոտալ յամը ըոցաց՝ ի վերայ ապստամբեալ քաղաքին։ Անմեղ ժողովուրդն իր կենաց փրկութեան համար ամրոցաց մէջ ապաւինեցաւ, որոնք թէպէտ մաս մը ապրեցան, բայց Էլմինա քաղաքն հրոյնարակ եղաւ, և ֆանդից զօրաց գունդերն՝ զորս Անգղիացիք զիներ էին, աստ անդ ցրուեցան։

Օգոստոսի 14ին, նաւաց փոքրիկ գումարտակ մը մօտեցաւ՝ ի ցամաք՝ ի գետաբերան Պոսսում բրահի, նպատակ ունենալով թափել անդ զօրականս առ ՚ի պաշտպանութիւն երկայնութեան գետոյն։ Բայց նաւախումբն կը ստիպուի քիչ մը հեռու կենալ ցամաքէն, պատճառաւաւ որ անմերձենալի էին գետափունքն յաղագս աւաղուտից։ Ցամաք կը հանէ՝ ի Շամա, ֆանդից փոքրիկ զօրաց խումբ մը, վասն զի քաղաքացիք Շամայի՝ մերժեալ էին տալ Անգղիացւոց առաջնորդս և ուղեցոյց։ Ֆանդք որ խելամուտ ու տեղեակ էին վայրացն, կը տիրեն պզտի ամրոցի մը՝ կանգնեալ ՚ի Հոլանտացւոց։ Այն ատեն երկու լաստք, կուր մը և մէկ քանի մակոչկը առանց վախի գետը կը մտնան։

Հազիւ թէ արշաւանաց մարդիկն կը հեռանան՝ ի Շամայէ, քաղաքացիք կը դիմեն ֆանդից վրայ և անոնցմէ չորսը կը սպաննեն, իսկ այլք մազապուր հազիւ կը զերծանին՝ ի մահուանէ։ Այս բաներս եղած ժամանակ լաստից խումբըն կը յառաջէ ոչ առանց մեծի գըժուարութեան բրահի ջրոց մէջ։ մին՝ ի լաստից կը խորտակի, ուստի հարկ կ'ըլլայ վրայի մարդիկը տեղափոխել ուրիշ մակուկի մը վրայ։ Այսպէս հազիւ թէ կը յառաջեն քիչ մը գետին մէջ, Աշանդքաց բազմաթիւ գունդ մը, որոյ հետ խառնուած էին և բազմութիւն մը բնակչաց Շամայի, մահաբեր կրակ մ'է կը սկսին թափել լաստից ու մակուկաց վրայ, դարանելով գետափանց թանձրախիտ մացառաց մէջ։ Անգղիական արշաւանաց առաջնորդն չորս վէրք կ'առնու, որոց երեքն մահացու։ Վտանգեցան նոյնպէս և նաւապետքն, որոց մին ոռումբի մը հարուած ընդունելով՝ ի գլուխը, կը խորտակի գանկին վերին մասը։ Կուրը հրացանաց անթիւ հարուածներէն կը շրջի, թափելով՝ ի ջուր բոլոր իր վրայի մարդիկը։ Նաւաստիքն ազատելով՝ ի ջրոյ՝ ուրիշ մակուկի մը վրայ կ'ելլան, բաց ՚ի միոյն որ Աշանդքաց ձեռքն իյնալով՝ գլուխը կը կտրեն և յաղթանակաւ կը

ցուցընեն իրեն ահարեկեալ ընկերացը : Վերջապէս արշաւանքն անյաջող կ'երթայ , և երբ ապրեալըն կորակոր կը դառնան 'ի նաւ , կը տեսնան որ մէջերնէն ամենքն ալ աւելի կամ նուազ խոցեալ էին կարեվէր :

Անդղիացիք երբոր այս կերպով պարտեցան , ապստամբութիւնն ու խոռվութիւնն աւելի ևս տարածուեցաւ , և Էլմինայի հարկատուք ևս դաշնաւորեցան Աշանդաց հետ . որով Անդղիացւոց վիճակն շատ աւելի վտանգեցաւ :

Այս ձախողանաց լուրն երբոր հասաւ յԱնդղիա , սաստիկ վախ մը գրաւեց ամենուն սիրտը : Չեռք զարկին անդէն երկրորդ արշաւանաց պատրաստութեան , որ մեկնեցաւ տարւոյս սեպտեմբերի 12են , ունելով հրաման դնալ 'ի վերայ գումասսի : Պատրաստութիւնքն մեծ ու ահաւոք եղան , բայց գործոյն յաջողութիւնը երկրայական :

Հրաման ունին մինչև մարտ ամիս ամենայն ինչ լմբնցնել , բայց կը մնայ տեսնել թէ ինչ ապագայ պիտի ունենան :

## ՎԻՍԴՈՆԴԻ-ՎԵՆՈՍԴԱ

Իտալական տէրութեան այժմեան արտաքին գործոց պաշտօնեայն , վիսդոնդի-վենոսդա , ծնած է յամին 1828: Աւելորդ կը համարիմք խօսել մանրամասն իր ամբողջ կենացն ընթացիցը վրայ 'ի մանկութենէ մինչև յայս չափ հասակի . այս միայն ըսեմք որ իր յաջողամտութեամբն յուսմունս և յառաջադիմութեամբն՝ գեղեցիկ ապագայ մը կը խոստանար իր հայրենեացը . որուն պատմութեանը հմտանալով և տեղեկանալով անոր փառաց ու աղետիցը , վառեցաւ սաստկապէս 'ի սէր նորա , որ մեծ նշան է ազնուախոհ սըրտի : Ճոխացեալ էր 'ի բնութենէ ընտիր ձրիք և բարեմասնութեամբք . ազնուական սիրտ մ'ունէր , եռանդուն հոգի և բազմաբեղուն միտք , և կար-

ծես փափաքանզք ժամանակին կ'ըսպասէր որ օդտակար ընէ իր հայրենեաց այս բարի ու գեղեցիկ տուրքերը :

Ցնծութեամբ ողջունեց առաջին անգամ՝ ի Միլան զառաջին արշալոյս ազատութեան հայրենեաց , գործակցելով անոնց՝ որք յայնժամ իրրև կազմողք համարեալ էին լոմպարտիոյ աղատական կուսակցութեան : Հանճարովն , բարուց քաղցրութեամբն ու սիրելութեամբն յինքն ձգեց Քավուր կոմսին համարումը ու բարեկամութիւնը , որ իր սիրելեաց ու գործակցաց մէջ դասեց զինքը . ու 'ի ցոյց և 'ի նշան իր վստահութեանը , կարիպալտի զօրավարին զրկեց զնա իրրև արքայական գործակատար :

Վիսդոնդի-վենոսդայի քաղաքագիտական յաջողամտութիւնն յայտնուեցաւ առաւելապէս յամին 1860 , երբ Բէրոլի մարզիզին հետ տարակարգ առաքելութեան պաշտօն մը կատարեց յարքունիս բարիզու ու լոնտուայի :

Երբ դարձաւ 'ի հայրենիս , ընդհանուր ընտրութեանց ժամանակ ըլլալով , երեսփոխան կարգեցաւ 'ի խորհըրդարանի : Եւ ապա 'ի վարձ և 'ի փխարէն իր հայրենեաց մատուցած ծառայութեանցը , կոչեցին զնա 'ի 'ի Պաշտօնարան արտաքին գործոց . և ժամանակ մը նոյն պաշտաման մէջ մնալէն ետքը իրրև քարտուզար , յամին 1863 մարտի 24են արտաքին գործոց Պաշտօնեայ անուանեցաւ , և կատարեց զայն մինչև 1864 տարւոյն սեպտեմբեր ամիսը . յորում 'ի պատճառս պաշտօնական գժտութեան՝ հրաժարեցաւ պաշտօնէն Մինկէդղիին , Բէրուցցիին ու այլոց հետ : Դարձեալ յամին 1866 յունիս ամսոյն մէջ կոչեցաւ պաշտօնեայ արտաքին գործոց . բայց այս անդամ ալ նոյնպէս կարճ տևեց , այսինքն մինչև յաջորդ տարւոյն ապրիլ ամիսը , յորում ժամանակի Պաշտօնարանն երկու նախագահ ունեցաւ , նախ զզօրապետն լա Մարմորա և ապա զի.իքաղոլի , երբ առաջինն մեկնեցաւ 'ի դաշտ պատերազմի : Ռիքազոլիէն